Հավելված N5

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2023 թվականի մարտի ----- -ի

N ՄՈ/ --------- -Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ, «Տարածքային կառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրագրերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Բաժնի կազմավորման, վերակազմակերպման և նրա գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կառավարչական

իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործունեության նպատակներն են՝

1) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ոլորտում մարզի զարգացման ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացումը.

2) Բաժնի, Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և Աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեության և համագործակցության ապահովումը.

3) Մարզի և համայնքների համաչափ զարգացման նախադրյալների ձևավորմանը նպաստելը:

6. Բաժնի գործունեության խնդիրներն են՝

1) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ոլորտին առնչվող խնդիրների բացահայտումը, դրանց կարգավորման ուղղությամբ առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

2) Բաժնի, մարզային ենթակայության կազմակերպությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև համագործակցության և գործողությունների փոխհարաբերակցության վերաբերյալ առկա խնդիրների բացահայտումը և դրանց լուծման ապահովումը:

7. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում՝

1) ապահովում է տարածքային կառավարման մակարդակում տնտեսության զարգացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրագործումը.
2) ապահովում է մարզի զարգացման ռազմավարության մշակումը և մշտադիտարկման իրականացումը.
3) ապահովում է մարզի զարգացման ռազմավարության իրականացման տարեկան գործունեության ծրագրի մշակման և լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնելու աշխատանքների, ինչպես նաև հաստատված ծրագրի մշտադիտարկման իրականացումը.
4) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է մարզի տնտեսական հնարավորությունների բացահայտման ուղղությամբ աշխատանքների համակարգումը, ինչպես նաև ապահովում է մարզի զարգացմանը միտված առաջարկությունները լիազորված մարմին ներկայացնելու աշխատանքները.
5) ապահովում է մարզի զարգացման ծրագրերի ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին՝ հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները.
6) յուրաքանչյուր տարվա համար ամփոփում է նախորդ տարվա ծրագրերի կատարողականի վերլուծությունը և կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալի միջոցով Մարզպետի հաստատմանն է ներկայացնում ըստ ոլորտների զարգացման տարեկան ծրագիրը.
7) իրականացնում է ծրագրային քաղաքականության վերլուծություն, ցուցանիշների և թիրախների վերհանում և ազդեցությունների գնահատում.
8) իրականացնում է ըստ ոլորտների գերակայությունների վերլուծություն, առաջնահերթությունների սահմանում և ապահովում է ոլորտային զարգացման ծրագրերի մշակման, դրանց իրականացմանն աջակցելու աշխատանքները.
9) ապահովում է ոլորտին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարումը՝ համայնքներից, հասարակական և մասնագիտական կառույցներից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն նրանց կողմից իրականացվող ծրագրերի մասին՝

մարզային զարգացման տեղեկատվական բազան համալրված վարելու, ինչպես նաև Մարզպետի զարգացման ծրագրի իրականացման մասին տարեկան հաշվետվությունը նախապատրաստելու և ներկայացնելու համար.

10) ապահովում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը Մարզպետին և ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալին.

11) ցուցաբերում է աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքային զարգացման ծրագրերի, տարեկան աշխատանքային պլանների կազմման գործընթացում.

12) ցուցաբերում է աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի նախնական հայտերի, ամբողջական փաթեթների կազմման գործընթացում և ապահովում հավանության արժանացած ծրագրերի իրականացման ընթացքի, հսկողության և մշտադիտարկման աշխատանքների իրականացումը.

13) ապահովում է մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության կազմակերպման աշխատանքները, աջակցում է մարզի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակմանը.

14) ապահովում է մարզի, մարզի համայնքների և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության աշխատանքների կազմակերպումը.

15) ապահովում է մարզի տարածքում միջազգային կառույցների և կազմակերպությունների ու ծրագրերի հետ համագործակցությունը.

16) ապահովում է մասնակցությունը մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.

17) ապահովում է մարզում զբոսաշրջության ոլորտի վիճակագրական և այլ վերլուծությունների իրականացման, համապատասխան առաջարկությունների և

հաշվետվությունների մշակման և լիազոր պետական մարմնին ներկայացման աշխատանքները.

18) մասնակցում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման աշխատանքներին և ապահովում է տեղեկատվական բազայի ստեղծման և վարման աշխատանքների իրականացումը.

19) աջակցում է մարզի արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտի կազմակերպություններին՝ հանրապետական և միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու հարցում.

20) Մարզպետի հանձնարարությամբ ներկայացնում է մարզը այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում.

21) ապահովում է Մարզպետի և ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալի մոտ զարգացման ծրագրերի շուրջ անցկացված խորհրդակցությունների, հանդիպումների կազմակերպման աշխատանքները և տրված հանձնարարականների կատարումը.

22) քննարկում է Աշխատակազմում ստացված քաղաքացիների դիմումները, բողոքները և լուծում է դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

8. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

9. Բաժնի կառավարումն իրականացնում են Մարզպետը և ոլորտը համակարգող Մարպետի տեղակալը:

10. Բաժնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Գլխավոր քարտուղարը:

11. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

12. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման,

գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում է նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**